ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ - ՈՒՂԵՑՈՒՅՑ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

ՏՐՎՈՒՄ Է ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԿԱԼԱՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՀԱՏԻՆ

ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(ՀՈԴՎԱԾ 63-1, 706-73, 11°, 706-88 և 706-88-1 ՔՐԵԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ)

Ստորև բերված տեղեկատվությունը տրվում է ձեզ, ձեր հասկանալի լեզվով: Այս փաստաթուղթը դուք կարող ձեր մոտ եք պահել, ոստիկանական կալանքի ընթացքում:

Դուք տեղեկացված եք, որ գտնվում եք ոստիկանության կալանքում, քանզի ձեր դեմ գոյություն ունի մեկ կամ մի քանի հավանական պատճառներ կասկածելու, որ դուք կատարել եք կամ փորձել եք կատարել ոճրագործություն, կամ հանցագործություն, որը բնութագրվում է ահաբեկչական գործողությամբ:

Դուք պետք է լսումներ անցկացնեք կատարված դեպքերի մասին, ձեր կալանքի առաջիկա 24 ժամվա ընթացքում:

Դուք իրավունք ունեք տեղեկություններ իմանալու ձեր հանցագործության որակավորման, ամսաթվին և ենթադրյալ հանցագործության կատարման վայրի մասին, որի մեջ դուք ներգրավված եք, ինչպես նաև իրավունք ունեք իմանալու տեղեկություններ ոստիկանությունում ձեր բերման ենթարկվելու պատճառների մասին:

Այս ժամանակահատվածի ավարտից հետո, հանրապետության դատախազը (le procureur de la République) և կամ հետաքննիչ դատավորը (le juge d'instruction) կարող են որոշել երկարաձգել ոստիկանությունում ձեր կալանքը ևս 24 ժամով: Սակայն նախքան որոշում կայացնելը, դատավորը կարող է ձեզանից պահանջել դատարան ներկայանալ:

Բացառութեան կարգով և անհրաժեշտության դեպքում, եթե դատաքննությունը պահանջի, երկու հավելյալ երկարաձգում կարող է որոշվել ձեր դեմ, յուրաքանչյուրը 24 ժամով. Որոշումը կկայացնի կա՛մ ազատությունների ու կալանման դատավորը (le juge des libertés et de la détention), կամ էլ հետաքննիչ դատավորը:

Այնուամենայնիվ, եթե իրականացվելիք հետաքննությունները արդարացնեն առաջին 48 ժամվա կալանքը, ազատությունների և կալանքի դատավորը՝ դատախազի կամ քննիչ դատավորի պահանջով, կարող է որոշում կայացնել երկարաձգել կալանքը միայն մեկ անգամ, 48 ժամվան համար:

Եթե հետաքննության առաջին տարրերից և կալանքի առաջին տվյալներից պարզվի, թե անմիջական ու լուրջ վտանք կա ահաբեկչական գործողության Ֆրանսիայում, կամ արտերկրում, որը կ'երթադրի անմիջական անհրաժեշտություն միջազգային համագործակցության, ազատությունների և կալանքի դատավորը կարող է որոշել երկարաձգել

ոստիկանական կալանքը լրացուցիչ 24 ժամով, ապա, այնուհետ, այդ կարող է երկարաձգվել ևս մեկ անգամով:
Ոստիկանական կալանքի ավարտից հետո, հանրապետության դատախազի և կամ հետաքննիչ դատավորի որոշմամբ, կա՛մ կներկայանաք դատավորի առաջ և կամ ազատ կարձակվեք: Առաջինի դեպքում դուք կներկայանաք դատավորի առաջ նույն օրը:
Եթէ դատարանում գոյություն ունեն հատուկ կալանավայրեր և ձեր կալանքի ժամանակահատուածը չի ձգել 72 ժամը, դատավորի առաջ կներկայանաք հաջորդ օրը, ձեր կալանքի ավարտի վերջին 20 ժամվա ընթացքում:
Եթե ձեր ոստիկանական կալանքի ժամանակահատվածը անցել է 72 ժամը, այդ դեպքում դուք դատավորի առաջ կներկայանաք կալանքի ավարտի օրը:

Ձեզ կտեղեկացվի, որ դուք իրավունք ունեք նաև

Զգուշացնել որոշ մարդկանց

- Դուք կարող եք հեռախոսով զգուշացնել մեկ անձի, ձեր կալանքի տակ գտնվելու մասին, ում հետ որ դուք ապրում եք սովորաբար, կամ ձեր հարազատ ծնողներից որևէ մեկին և կամ ձեր եղբայրներից, քույրերից մեկին:
- Դուք կարող եք տեղեկացնել նաև ձեր գործատուին:
- Եթե դուք օտարերկրյա քաղաքացություն ունեք, կարող եք նաև տեղեկացնել ձեր երկրի հյուպատոսական մարմիններին: Նրանք, ձեր կողմից օգնության դիմում ստանալուց հետո, բացառությամբ հարգելի հանգամանքների, ամենաուշ 3 ժամվա ընթացքում կմիջամտեն:
- Եթե դուք իրավական պաշտպանության տակ եք գտնվում, ձեր խնամակալը, ձեր օգնականը կամ ձեր փոխարեն որոշում կայացնող անհատը կտեղեկացվեն ձեր կալանքի տակ գտնվելու մասին:

Այնուամենայնիվ, հանրապետության դատախազը (կամ հետաքննիչ դատավորը) կարող է որոշել, որ այդ հանդիպումները չկայացվեն, եթէ հանգամանքները այդպես պարտադրեն, որպիսի հետաքննության տեղեկությունները գաղտնի պահեվեն ու չփոխանցվեն ոչ ոքի՝ ապացույցների հավաքագրման ու պահպանման, կամ ալ անհատի կյանքի, ազատության, և անվտանգության նկատառումներով:

Եթե ձեր ոստիկանական կալանքի ժամկետը երկարաձգվի 48 ժամից ավել, ազատությունների ու կալանքի դատավորը և կամ հետաքննիչ դատավորը կարող են հետաձգել ձեր հարազատներին և ձեր գործատուին տեղեկություններ փոխանցել՝ վերոնշյալ պատճառներից ելնելով:

Եթե ձեր ազգականներից մեկին զգուշացնելու ձեր խնդրանքը չի բավարարվում և եթե ձեր ոստիկանական կալանքը երկարաձգվում է 96 ժամից ավել, այդ դեպքում կարող եք հայցը կրկնել 96-րդ ժամից սկսյալ:

Հաղորդակցվել մեկ հոգու հետ

Դուք կարող եք հաղորդակցվել գրավոր կերպով, հեռախոսով և կամ հանդիպում անցկացնել այն մարդկանցից մեկի հետ, ում տեղեկացվել էր ձեր կալանավորման մասին:

Դատական ոստիկանության աշխատակիցը կարող է մերժել ձեր հայցը, եթե այն համատեղելի չէ ձեր ոստիկանությունում պահվելու պատճառների կամ այլ հանցագործություն թույլ տալու ռիսկի հետ: Դատական ոստիկանության աշխատակիցը կարող է որոշել զրույցի պահը, ժամանակը, պայմանները և տևողությունը, որը, համենայնդեպս, չի կարող գերազանցել 30 րոպեն: Հանդիպումները կ՛անցկացվեն իր, կամ իր կողմից նշանակված անձի վերահսկողության ներքո:

Եթե ձեր ոստիկանական կալանքը երկարաձգվի 48 ժամից ավել, Դատական ոստիկանության աշխատակիցը չի կարող մերժել, որ դուք կապի մեջ մտնեք հյուպատոսական իշխանությունների հետ:

Հետազոտվել բժշկի կողմից

Դուք կարող եք խնդրել, որ հետազոտվեք բժշկի կողմից հենց ոստիկանական կալանքի սկզբիը և կալանքի ժամկետը երկարաձգելու դեպքում, կրկին անգամ կարող եք պահանջել հետազոտվել:
Յուրաքանչյուր կալանքի երկարաձգման թույլտվությունից հետո, դուք պարտադիր կհետազոտվեք և ձեզ կտեղեկացվի, որ դուք իրավունք ունեք պահանջել հետազոտություն անցկացնել բժշկի կողմից:

Եթե դուք իրավական պաշտպանության տակ եք գտնվում, ձեր խնամակալը, ձեր օգնականը կամ ձեր փոխարեն որոշում կայացնող անհատը կարող է ինք պահանջել, որ բժշկական հետազոտություն անցկացնեք:

Հայտարարություններ կատարել, հարցերին պատասխանել կամ լռություն պահպանել

Ոստիկանությունում ձեր ինքնությունը հայտնելուց հետո, լսումների ժամանակ իրավունք ունեք;

- Հայտարարություններով հադես գալ,
- Պատասխանել ձեզ տրված հարցերին,
- Լուռ մնալ:

Փաստաբանի միջամտություն

Փաստաբանի ընտրություն

Ոստիկանական կալանքի սկզբից, լսումների ցանկացած պահին և կալանքի երկարաձգումի հենց առաջին րոպէին, կարող եք խնդրել փաստաբանի օգնություն և ընտրել այն: Եթե դուք ի վիճակի չեք նշանակել փաստաբան և կամ ձեր նշանակած փաստաբանի հետ կապ հաստատել հնարավոր չե, այդ դեպքում կարող եք պահանջել, որ ոստիկանատունը ինք փաստաբան նշանակի ձեզ համար:

Փաստաբանը կարող է նշանակվել, նաև, ձեր կողմից որոշված անձանցից մեկի կողմից. այս դեպքում դուք պետք է ձեր համաձայնություն հայտնեք նշանակված փաստաբանին:

Եթե դուք իրավական պաշտպանության տակ եք գտնվում, ձեր խնամակալը, ձեր օգնականը կամ ձեր փոխարեն որոշում կայացնող անհատը կարող է ինք փաստաբան պահանջել և կամ խնդրել, որ փաստաբան նշանակվի հենց դատարանի (bâtonnier) կողմից:

Փաստաբանի օգնություն

Փաստաբանը կարող է ձեզ հետ զրուցել 30 րոպե: Ոստիկանական կալանքի երկարաձգման դեպքում կարող եք կրկին զրուցել ձեր փաստաբանի հետ:
Փաստաբանը կարող է նաև, եթե դուք դիմեք, ձեզ հետ մասնակցել լսումների, առճակատումների, գործի կառուցման և ստուգմների նիստերին:

Միջամտության ժամկետը

Հաշվի առնելով ձեր անհապաղ լսումը պահանջող հետաքննության հարկադրանքը, դատախազը կամ հետաքննիչ դատավորը, կարող են թույլ տալ, գրավոր և պատճառաբանված որոշումով, որ

ձեր նիստը անմիջապես սկսվի, նախքան 2 ժամյա ժամկետի ավարտը, առանց սպասելու ձեր փաստաբանի ժամանմանը:

Ձեր փաստաբանի միջամտությունը կարող է նաև հետաձգվել՝ դատախազի, ազատությունների և կալանքի դատավորի և կամ հետաքննիչ դատավորի որոշմամբ՝ առավելագույնը 48 ժամ ժամկետով, եթե հիմնավոր ու լուջ պատճառներ կան դրա համար:

Թարգմանիչի օգնություն

Եթե ֆրանսերեն չեք խոսում, կամ չեք հասկանում, նիստերի ընթացքում, ինչպես նաև փաստաբանի հետ հանդիպումների ընթացքում, իրավունք ունեք անվճար թարգմանչի օգնությունից օգտվել:

Ներկայացնել դիտարկումներ ոստիկանական կալանքը վերջ դնելու նպատակով

Եթէ հանրապետության դատախազը կամ հետաքննիչ դատավորը որոշում կայացնեն ոստիկանական կալանքը երկարաձգելու մասին, այդ դեպքում, դուք կարող եք դիտարկումներ ներկայացնել ոստիկանական կալանքը վերջ դնելու նպատակով:

Ծանոթանալ ձեր գործերի որոշակի փաստաթղթերի հետ

Ձեր կամ ձեր փաստաբանի խնդրանքով, մինչև ձեր կալանքը երկարաձգելու որոշումը, կարող եք դիմում ներկայացնել ու ծանոթանալ ձեր գործերին;

- Կալանավորման ծանուցագրին,
- Ձեզ ստուգող բժշկի ատեստատին կամ ատեստատներին,
- Ձեր լսումների արձանագրություններին:

Դիտարկումներ ներկայացնել դատախազին

Ոստիկանական կալանքից հետո, եթէ ցանկանում եք, կարող եք մեկ տարվա ընթացքում, ծանոթանալ ձեր գործերի ընթացքին և կամ դիտարկումներ ներկայացնել հատուկ նամակով՝ ստացման հաստատումով նամակ (lettre recommandée avec demande d'avis de réception) և կամ ուղակի դիմում ներկայացնել դատարանի քարտուղարին (greffe), որը ձեր դիմումը ընդունելուց, ձեզ կհանձնի ստացագիր: